2 9 JAN 2018

1934 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՐՊՈՎ ԿԱԹ ՅԵՎ ՅՈՒՂ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Գրադարան
ՀԱՍՄՍ
Գրադարան
II 297861գ

Պետական տպարան, Գլավ. № 10 Պատվ. № 136 Տիրաժ 2000. Հայտնի է՝ անոնց

1934 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՐՊՈՎ ԿԱԹ ՅԵՎ ՅՈՒՂ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ. ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀՍԽՀ Ժողկոմխորհի և Համ. Կ(բ)Կ Կենտկոմի 1933 թ. նոյեմբերի 22-ի և Անդրժողկոմխորհի ու Համ. Կ(բ)Կ Անդրյերկոմի 1933 թ. դեկտեմբերի 28-ի «1934 թ. պետութիւնը պարտադիր կերպով կաթ, յուղ և պանիր հանձնելու մասին ելած վորոշումներին համապատասխան, ՀՍԽՀ Ժողկոմխորհը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ՝

1. 1934 թ. համար (հուվարի 1-ից մինչև դեկտ. 31-ը) ըստ շրջանների սահմանել պետութիւնը պարտադիր, հարկի ուժ ունեցող կարգով, պետական գներով կաթ հանձնելու հետևյալ միջին նորմաները—կաթնապրանքային ֆերմաներ ունեցող կոլտնտեսութիւնների անդամ տնտեսութիւնների համար առանձին, կաթնապրանքային ֆերմաներ չունեցող կոլտնտեսութիւնների անդամ տնտեսութիւնների համար առանձին և անհատական գյուղացիական տնտեսութիւնների համար առանձին (լիտրերով՝ յուրաքանչյուր կովից տարեկան).

Շրջաններ	Կոլտնտեսության ֆերմաներ չունեցող կոլտնտեսությունների անդամ տնտեսությունների համար	Կոլտնտեսության ֆերմաներ ունեցող կոլտնտեսությունների անդամ տնտեսությունների համար	Անհատական գյուղացիական տնտեսությունների համար
I ԽՈՒՄԲ			
1. Ստեփանավան	85	120	200
II ԽՈՒՄԲ			
2. Դիլիջան	50	80	125
3. Ղարաքիլիսա (ՀՍՀ և քաղ.)			
4. Սիսիան			
III ԽՈՒՄԲ			
5. Աբարան			

6. Ախտա			
7. Աղբաբա			
8. Արթիկ	40	70	110
9. Բասարգեչար			
10. Գորիս			
11. Լենինական (շրջ. քաղ.)			
12. Մարտունի			
13. Ն. Բայազետ			
14. Փաշալու			
IV ԽՈՒՄԲ			
15. Ալավերդի			
16. Աջտարակ			
17. Թալին			
18. Իջևան			
19. Կոտայք			
20. Մեղրի			
21. Շամշադին	30	60	100
22. Ղամարլու			
23. Ղափան			
24. Ղուրդուղուլի			
25. Վաղարշապատ			
26. Վեդի			
27. Քեշիշքենդ			
28. Ցերեան քաղաք			

2. Կաթնապրանքային ֆերմաների և կոլտնտեսությունների հանրայնացված հոտերի համար սահմանել պետությանը պարտադիր, հարկի ուժ ունեցող կարգով կաթ հանձնելու հետևյալ նորմաները՝ (լիտրերով, յուրաքանչյուր կովից տարեկան).

Շրջաններ	Նորման լիտրերով
I ԽՈՒՄԲ	
1. Ստեփանավան	400
II ԽՈՒՄԲ	
2. Դիլիջան	
3. Ղարաքիլիսա	250
4. Սիսիան	
III ԽՈՒՄԲ	
5. Արարատ	
6. Ախտա	
7. Աղբաբա	
8. Արթիկ	
9. Բասարգեչար	200
10. Գորիս	
11. Լենինական	
12. Մարտունի	
13. Ն. Բայազետ	
14. Փաշալու	
IV ԽՈՒՄԲ	
15 Ալավերդի	
16. Աջտարակ	
17. Թալին	
18. Իջևան	
19. Կոտայք	
20. Մեղրի	150
21. Շամշադին	
22. Ղամարլու	
23. Ղափան	
24. Ղուրդուղուլի	
25. Վեդի	
26. Քեշիշքենդ	
27. Վաղարշապատ	

3. Կաթնապրանքային ֆերմաների, կոլտնտեսությունների (այդ թվում նաև կոմունաների) և անհատական տնտեսությունների կողմից հանձնվելիք կաթի քանակը վորոշվում է առ 1-ը նոյեմբերի 1933 թ. յեղած կովերի թվի համապատասխան։

Կոլտնտեսությունների հանրայնացված հոտերի և կոլտնտեսային ապրանքային ֆերմաների անասունների իսկական թիվը թագցնելու համար քրեական պատասխանատվության յենթարկել կոլտնտեսությունների վարչության նախագահներին և կոլտնտեսային կաթնապրանքային ֆերմաների վարիչներին՝ ՀՍՍՀ քրեական որենսգրքի 135 հոդվածով։

4. Այն շրջաններում, ուր չկա պանրի գործարաններ, բացառությամբ թարմ կաթ մատակարարող շրջանների, մենատնտեսները, կոլտնտեսությունները ու կոլտնտեսության անդամ տնտեսությունները իրենց պարտավորությունները կատարում են հալած յուղով, հաշվելով 1 կիլոգրամ յուղը 25 լիտր կաթի փոխարեն։

5. Սահմանել կոլտնտեսությունների (այդ թվում նաև կոմունաների), կոլտնտեսության անդամ տնտեսությունների և անհատական տնտեսությունների կողմից պետությանը կաթ հանձնելու համար հետևյալ որացուցային ժամկետները՝ տոկոսներով —հաշված այս վորոշման առաջին և յեկրորդ կետերում մատնանշված տարեկան նորմաներից—առաջին յեռամսյակում՝ 5 տոկ.,

չեկրորդ յեռամսյակում՝ 45 տոկ., յերրորդ յեռամսյակում՝ 45 տոկ., չորրորդ յեռամսյակում՝ 5 տոկ.։

6. Առաջարկել շրջանային գործադիր կոմիտեներին և մթերող կազմակերպություններին՝ այս վորոշմամբ սահմանված նորմաների համաձայն լրիվին ապահովել յուղ և կաթ հանձնելու շրջանային պլանների կատարումը։

Իշխանության տեղական մարմիններին անվերապահորեն արգելվում է կոլտնտեսային ֆերմաների, կոլտնտեսությունների հանրայնացված հոտերի, կոմունաների, կոլտնտեսության անդամ տնտեսությունների և անհատական տնտեսությունների համար սահմանված պետությանը կաթ հանձնելու շրջանային նորմաները փոփոխության յենթարկելը։

7. Պարտավորեցնել գյուղխորհուրդների և շրջանային գործադիր կոմիտեների նախագահներին՝ 10 օրվա ընթացքում յուրաքանչյուր կաթնապրանքային ֆերմային, հանրայնացված հոտ ունեցող կոլտնտեսության և կոմունայի, կով ունեցող կոլտնտեսության անդամ տնտեսության ու անհատական տնտեսության տալ պետությանը կաթ և յուղ հանձնելու պարտավորագրերը, մատնանշելով հանձման կետը, բաժանելով տարեկան նորման ըստ ամիսների, համաձայն շրջանի համար սահմանված մթերման յեռամսյա պլանների։

8. Պարտավորեցնել գյուղխորհուրդների նախագահներին՝ կոլտնտեսությունների կոլտնտեսության անդամ տնտեսությունների և անհատական տնտեսությունների կողմից պետությանը կաթ հանձնելու պարտավորությունների կատարման լրիվ հաշվառում կատարել։

9. Այն կոլտնտեսությունները, կոլտնտեսությունների անդամ տնտեսությունները և անհատական տնտեսությունները վորոնք չեն կատարում պետությանը կաթ հանձնելու իրենց ամսական պարտավորությունները՝ յենթարկվում են դրամական տուգանքի—պարտավորագրի չկատարած մասի շուկայի արժեքի չափով, հաջորդ ամսում անվիճելի կարգով գանձելով պարտավորագրի չկատարած մասը տվյալ ամսի համար սահմանված կաթի հանձման նորմայից դուրս.

10. Պարտավորեցնել յուղագործարանների դիրեկտորներին կաթ հանձնողներին վերադարձնել կաթը յուղի վերամշակելուց ստացված մնացորդները (օբրատ), հետևյալ քանակությամբ՝ կաթնապրանքային ֆերմաներին և կոլտնտեսություններին (վորոնց թվում նաև հանրայնացված հոտ ունեցող կոմունաներին) հանձնված կաթի կշռի 50 տոկ., մյուս տնտեսություններին՝ հանձնված կաթի կշռի 35 տոկ.։

11. Այս վորոշմամբ սահմանված կարգով կաթ և յուղ մթերելու պարտականությունը դնել Հայյուղարդի և Հայկոոպի պանրագործարանների, կաթկայանների և մթերման կետերի վրա։

12. Այս վորոշմամբ սահմանված պարտավորությունները կատարելու հաշվին յեռը քաշած ու կեղծված (խարնուրդով) կաթ հանձնելու փորձ կատարելու համար պատասխանատվություն սահմանել ՀՍԽՀ քր. օրենսգրքի 135 և 300-րդ հոդվածներով։

13. Առաջարկել ՀՍԽՀ Մատժողկոմատին՝ համաձայնության գալով Հայկոոպի հետ՝ հաստատել այն շրջանների և գյուղերի ցուցակը, վորտեղ թարմ կաթ է մթերվելու արդյունաբերական կենտրոններին մատակարարելու համար։

14. Այս վորոշման գործնական կենսագործման պարտավորությունը դնել ՀՍԽՀ Մատժողկոմատի և նրա տեղական մարմինների վրա։

15. Անվերապահորեն արգելել իշխանության տեղական մարմիններին և մթերող կազմակերպություններին կոլտնտեսային ապրանքային ֆերմաների ու կոլտնտեսությունների հանրայնացված հոտերի, կոլտնտեսականների և մենատնտեսների վրա պետությանը կաթ հանձնելու այս վորոշմամբ սահմանված նորմաներին գերազանցող պարտավորություններ դնել։ Արգելել նաև պարտավորությունները ժամկետից առաջ կատարած տնտեսություններին կաթի հանձնման լրացուցիչ հանդիպական պլաններ տալը, պարտավորությունները կանոնավոր կատարող տնտեսություններին լիակատար հնարավորություն տալով իրենց հայեցողությամբ ազատորեն տնօրինելու իրենց արտադրանքի ավելցուկները։

Նախազգուշացնել կուսակցական և խորհրդային բոլոր կազմակերպություններին, վոր հանդիպական պլաններ տալու համար հանցավոր յեղողները կյենթարկվեն քրեական պատասխանատվության։

ՀՍԽՀ Ժողկոմխորհի Նախագահի տեղակալ՝ **Ա. ԵՐԶՆԿՅԱՆ**

ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար **Ա. ԽԱՆՋՅԱՆ**

ՀՀ Ազգային գրադարան
NL0927818

1994 г. — 102

11
27861